Կարգապահական գործ թիվ ԿԳ-24181

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆԱՀԻՏ ԱԼԲԵՐՏԻ ԱԼՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ և Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ Մանիկ Մինասյանի և նրա ներկայացուցիչ Գոհարիկ Թաֆրալյանի,

քննության առնելով փաստաբան Անահիտ Ալբերտի Ալոյանի **(այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 207), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Մանիկ Մինասյանը (**այսուհետև՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետև՝ նաև Պալատ**), հայտնել է, որ փաստաբան Անահիտ Ալոյանն առանց հարգելի պատճառների բազմիցս չի ներկայացել դատական նիստերին, իր բացակայությունները պատճառաբանել է փաստաթղթերը կորցնելու, անձնական գործեր ունենալու, ֆիզիկական վնասվածքներ ստանալու հանգամանքներով: Փաստաբանը փաստաթղթերը ներկայացրել է դատավարական ժամկետների խախտմամբ կամ թերի, չի տրամադրել խորհրդատվություն: Փաստաթղթերի թերի ներկայացման և փաստաբանի բացակայությունների արդյունքում հակառակ կողմը ստացել է առավելություններ:

Դիմողը նշել է, որ Փաստաբանը հրաժարվել է իրավական օգնություն ցույց տալուց՝ դատական նիստից անմիջապես առաջ:

Դիմողը ներկայացրել է՝ 28.04.2023 և 10.05.2023 թվականների Փաստաբանին ուղարկած փոխանցումների փաստը հավաստող ապացույցներ, ինչպես նաև

04.04.2024 թվականի փոխանցման վերաբերյալ փաստաթուղթ, որից պարզ չէ, թե փոխանցումն ում հաշվին է կատարվել:

Դիմողը խնդրել է քննարկել Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 14.02.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիմողն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ 2024 թվականի հոկտեմբերին Գոհար Թաֆրայանը Փաստաբանի ծառայություններից դժգոհություն հայտնելիս Փաստաբանից ստացել է առաջարկ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով գումարի մի մասը, փոխանցելով այն նրա կողմից մատնանշված հաշվեհամարին, սակայն Գոհար Թաֆրայանը հրաժարվել է նշված առաջարկից և դիմել է այլ փաստաբանի:

2. **<u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>**

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Անահիտ Ալոյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Մանիկ Մինասյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը, ներկայացրած բացատրություններով հայտնել է, որ տրամադրել է բարեխիղճ իրավաբանական օգնություն: Նշված գործով դատական նիստերը հետաձգվել են օբյեկտիվ հիմքերով: Մեկ դատական նիստ հետաձգվել է իր կողմից դրամապանակը կորցնելու և ճանապարհածախսը հոգալու անհնարինության պատճառով, մեկ դատական նիստ՝ ընտանեկան հանգամանքների բերումով, իսկ նշանակված դատական նիստերից մեկն էլ հետաձգել է վստահորդների շահերից ելնելով:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 14.02.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 24.02.2025թ. ներկայացրած բացատրությամբ վերահաստատել է նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ հավելելով, որ փաստացի չի մասնակցել թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործով 18.04.2024 և 10.10.2024 թվականներին նշանակված նիստերին՝ մի դեպքում դրամապանակը և փաստաթղթերը կորցնելու, իսկ մյուս դեպքում՝ իր տղայի կնոջ վիրահատության պատճառով:

3. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 25.12.2024թ. թիվ 429-Ա/ԿԳ-24181 որոշմամբ փաստաբան Անահիտ Ալոյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ**

հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.2, 3.5.5, 3.8.2 և 3.8.3 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

27.12.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 27.02.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-10-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 26.03.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Անահիտ Ալոյանի և Գոհար Թաֆրալյանի միջև 17.03.2024թ. կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է հօգուտ Պատվիրատուի իրականացնել փաստաբանական գործունեություն, այն է՝ ծանոթանալ քաղաքացիական նյութերին Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանում, կազմել վերաքննիչ բողոք թիվ ՇԴ3/0580/02/22 վճռի բողոքարկման համար և ներկայացնել շահերը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում:

Պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավորվել է վճարել Կատարողին ծառայության դիմաց վճար փոխադարձ համաձայնությամբ, որը կազմել է՝ 120.000 ՀՀ դրամ:

Սույն փաստերը հաստատվում են *Անահիտ Ալոյանի և Գոհար Թաֆրալյանի միջև 17.03.2024թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենով:*

2. Թիվ ՇԴ3/0580/02/22 վճռի դեմ 29.05.2023թ. վերաքննիչ բողոք են ներկայացրել գործին մասնակից չդարձված անձինք **Մանիկ Մինասյանը, Լիզա, Գոհարիկ Թաֆրալյանները (ներկայացուցիչ Անահիտ Ալոյան)**: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2023թ. որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 31.01.2023թ. թիվ ՇԴ3/0580/02/22 վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան նոր քննության:

Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:

3. Փաստաբան Անահիտ Ալոյանի և Գոհար Թաֆրալյանի միջև 02.05.2024թ. կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է հօգուտ Պատվիրատուի իրականացնել փաստաբանական գործունեություն, այն է՝ կազմել հակընդդեմ հայց թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում քննելու համար և ներկայացնել շահերը Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանում:

Պայմանագրի 2-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավորվել է վճարել Կատարողին ծառայության դիմաց վճար փոխադարձ համաձայնությամբ, որը կազմել է՝ 120.000 ՀՀ դրամ:

Սույն փաստերը հաստատվում են Անահիտ Ալոյանի և Գոհար Թաֆրալյանի միջև 02.05.2024թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի, ինչպես նաև 03.05.2024 թվականի լիազորագրի պատճեններով:

4. Թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործով՝ 13.05.2024 թվականին Դատարանում մուտքագրվել է Գոհարիկ Օնիկի Թաֆրալյանի, Մանիկ Աշոտի Մինասյանի, Լիզա Աշոտի Թաֆրալյանի կողմից ներկայացված հակընդդեմ հայցադիմումն ընդդեմ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի, Գոհար Շիրակի Մինասյանի, Կարինե Շիրակի Մինասյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

5. Թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործով ներկայացված հակընդդեմ հայցադիմումի ընդունումը մերժվել է: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

6. Գոհարիկ Օնիկի Թաֆրալյանի, Մանիկ Աշոտի Մինասյանի և Լիզա Աշոտի Թաֆրալյանի կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի, Գոհար Շիրակի Մինասյանի և Կարինե Շիրակի Մինասյանի՝ ՀՀ Շիրակի մազի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 77 շենքի թիվ 9 հասցեի բնակարանի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

7. Թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործը կասեցվել է մինչև թիվ ՇԴ/0797/02/24 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

8. Փաստաբանի և Գոհար Թաֆրալյանի միջև 02.05.2024 թվականին փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման պահից՝ 02.05.2024 թվականից մինչև սույն կարգապահական գործով առիթ հանդիսացած Դիմողի հաղորդման ներկայացման օրը՝ 25.11.2024 թվականն ընկած ժամանակահատվածում տվյալ գործով նշանակված են եղել թվով 4 դատական նիստ՝ **18.04.2024,** 16.05.2024, 15.08.2024 և **10.10.2024** թվականներին: Նշված նիստերից **18.04.2024 թվականի** նշանակված դատական նիստին **Փաստաբանը չի ներկայացել՝ իր դրամապանակը կորցնելու պատճառով, իսկ 10.10.2024 թվականին** նշանակված

դատական նիստին չի ներկայացել՝ **իր տղայի կնոջ վիրահատության պատճառով**: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությամբ, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

9. Փաստաբան Անահիտ Ալոյանի և **Գոհար Թաֆրալյանի** միջև 02.05.2024թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծվել է՝ 2024 թվականի հոկտեմբեր ամսին: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

10. Փաստաբանն առաջարկել է վերադարձնել գումարի մի մասը, սակայն Գոհար Թաֆրալյանը հրաժարվել է, ինչից հետո Գոհար Թաֆրալյանը դիմել է այլ փաստաբանի: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

6. **<u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Անահիտ Ալբերտի Ալոյանը փաստաբան է հանդիսանում 04.07.1988 թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. **<u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Անահիտ Ալբերտի Ալոյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.8.2 և 3.8.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական*

պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններ իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այս համատեքստում, Կանոնագրքի մի շարք դրույթների կիրառելիությունը ևս ինքնանպատակ չէ և Հանձնաժողովի կողմից այդ դրույթներով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների համատեքստում փաստաբանի վարքագծի քննարկման իրավական հնարավորությունն ուղղակիորեն փոխկապակցված է որոշակի պայմանների առկայության կամ բացակայության հետ:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողն ըստ էության Փաստաբանին վերագրում է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի հետագա կատարումից անհիմն հրաժարվելու, ինչպես նաև գործը այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը հայտնվել է անելանելի դրության մեջ և ժամանակին չի ստացել իրավական օգնություն թողնելու վարքագիծը:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ

• Փաստաբանի և Գոհար Թաֆրալյանի միջև 17.03.2024 թվականին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետ՝ 1-ին Պայմանագիր),** որի համաձայն՝ **Փաստաբանը պետք է կազմեր վերաքննիչ բողոք թիվ ՇԴ3/0580/02/22 վճռի բողոքարկման համար** և ներկայացնել շահերը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում, իսկ նշվածի համար պատվիրատու Գոհար Թաֆրալյանը վճարել է 120.000 ՀՀ դրամ:

1-ին Պայմանագրով տրված հանձնարարության կատարման ապահովման նպատակով Փաստաբանը գործին մասնակից չդարձված անձանց Մանիկ Մինասյանի, Լիզա, Գոհարիկ Թաֆրալյանների անունից որպես ներկայացուցիչ **թիվ ՇԴ3/0580/02/22 գործով վճռի դեմ 29.05.2023 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք,** ինչի արդյունքում նշված գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2023 թվականի որոշմամբ՝ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 31.01.2023 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան նոր քննության:

Նշվածի հաշվառմամբ **սպառվել է 1-ին Պայմանագրի առարկան ամբողջ ծավալով**:

• Այնուհետև, Փաստաբանի և Գոհար Թաֆրալյանի միջև 02.05.2024 թվականին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետ՝ 2-րդ Պայմանագիր),** որի համաձայն՝ **Փաստաբանը պետք է կազմեր հակընդդեմ հայց թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում քննելու համար** և **ներկայացներ շահերը Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանում**, իսկ նշվածի համար պատվիրատու՝ Գոհար Թաֆրալյանը վճարել է 200.000 ՀՀ դրամ:

Միաժամանակ, Փաստաբանի և Գոհար Թաֆրալյանի միջև 02.05.2024 թվականին կնքվել է ևս մեկ պայմանագիր, որի համաձայն՝ պատվիրատու՝ Գոհար Թաֆրալյանը վճարում է 80.000 ՀՀ դրամ որպես ճանապարհածախս Փաստաբանի կողմից մատուցվող փաստաբանական ծառայությունների իրականացման համար: Ընդ որում, Գոհարիկ Օնիկի Թաֆրալյանը, Մանիկ Աշոտի Մինասյանը, Լիզա Աշոտի Թաֆրալյանը 03.05.2024 թվականին Փաստաբանին լիազորել են հանդես գալ իրենց անունից ՀՀ դատական բոլոր ատյաններում:

Դատարանը թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործով նշանակված 18.04.2024 թվականի դատական նիստին Գոհարիկ Օնիկի Թաֆրալյանը, Մանիկ Աշոտի Մինասյանը, Լիզա Աշոտի Թաֆրալյանը ներգրավվել է գործին որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք:

2-րդ Պայմանագրով տրված հանձնարարության կատարման ապահովման նպատակով Փաստաբանը Գոհարիկ Օնիկի Թաֆրալյանի, Մանիկ Աշոտի Մինասյանի, Լիզա Աշոտի Թաֆրալյանի անունից **կազմել է հակընդդեմ հայցադիմում** ընդդեմ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի, Գոհար Շիրակի Մինասյանի, Կարինե Շիրակի Մինասյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, **որը թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործի** շրջանակներում **մուտքագրվել է Դատարան 13.05.2024** թվականին, ինչից հետո Դատարանի 29.05.2024 թվականի **որոշմամբ դրա ընդունումը մերժվել է:**

2-րդ Պայմանագրով տրված հանձնարարության կատարման ապահովման նպատակով Փաստաբանը Գոհարիկ Օնիկի Թաֆրալյանի, Մանիկ Աշոտի Մինասյանի և Լիզա Աշոտի Թաֆրալյանի անունից կազմել է հայցադիմում ընդդեմ Շիրակի մարզի

Գյումրու համայնքապետարանի, Գոհար Շիրակի Մինասյանի և Կարինե Շիրակի Մինասյանի՝ ՀՀ Շիրակի մազի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 77 շենքի թիվ 9 հասցեի բնակարանի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, որը թիվ ՇԴ/0797/02/24 քաղաքացիական գործով մուտքագրվում է Դատարան 06.09.2024 թվականին, ինչի արդյունքում Դատարանը 17.09.2024 թվականին կայացնում է այն վարույթ ընդունելու մասին որոշում:

Նշվածի հաշվառմամբ թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործով Դատարանի 12.02.2025 թվականի որոշմամբ տվյալ գործի վարույթը կասեցվել է մինչև թիվ ՇԴ/0797/02/24 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

Այդ ընթացքում՝ 2-րդ Պայմանագրի կնքման պահից՝ 02.05.2024 թվականից մինչև սույն կարգապահական գործով առիթ հանդիսացած Դիմողի հաղորդման ներկայացման օրը՝ 25.11.2024 թվականն ընկած ժամանակահատվածում տվյալ գործով նշանակված են եղել թվով 4 դատական նիստ՝ 18.04.2024, 16.05.2024, 15.08.2024 և 10.10.2024[1] թվականներին, որոնցից՝

1) 18.04.2024 թվականին նշանակված և կայացած դատական նիստին Փաստաբանը չի ներկայացել, *այն պատճառաբանությամբ, որ կորցրել է իր դրամապանակը դրանում առկա փաստաթղթերով, ինչի մասին տեղեկացրել է Դիմողին,*

2) 16.05.2024 թվականին *նշանակված դատական նիստը չի կայացել՝ Դատավորի ժամանակավոր անաշխատունակության պատճառով,*

3) 15.08.2024 թվականին *նշանակված դատական նիստը կայացել է և Փաստաբանի միջնորդությամբ հետաձգվել է այն հիմնավորմամբ, որ Գոհարիկ Օնիկի Թաֆրալյանի, Մանիկ Աշոտի Մինասյանի, Լիզա Աշոտի Թաֆրալյանի շահերի պաշտպանության ապահովման նպատակով պահանջել է որոշակի տեղեկություններ՝ այդ թվում հետագայում դատարան հայց ներկայացնելու համար,*

4) 10.10.2024 թվականին նշանակված դատական նիստին Փաստաբանը չի ներկայացել, *այն պատճառաբանությամբ, որ իր տղայի կինը պետք է վիրահատվեր: Նշված նիստը հետաձգվել է՝ գործի վարույթը կասեցնելու համար միջնորդությունը ներկայացնելու և քննարկելու համար:*

Հետագայում, Գոհարիկ Թաֆրալյանը, ունենալով որոշակի դժգոհություն գործի ընթացքում դատական նիստերին Փաստաբանի մասնակցության և դրանք հետաձգելու վերաբերյալ, 2024 թվականի հոկտեմբեր ամսին Փաստաբանից պահանջել է վերադարձնել վճարված գումարն ամբողջությամբ, ինչի կապակցությամբ Փաստաբանը առաջարկել է վերադարձնել գումարի մի մասը փոխանցելով վերջինիս հաշվեհամարին և ստորագրելով փաստաթուղթ 2-րդ Պայմանագիրը լուծելու մասին, սակայն Գոհարիկ Թաֆրալյանը հրաժարվել է, ինչից հետո դիմել է նոր փաստաբանի, իսկ Դիմողն, իր հերթին, 25.11.2024 թվականին ներկայացրել է բողոք Պալատ:

1. Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը, պատասխանելով հարցին առ այն, արդյոք Փաստաբանը բարեխիղճ իրավական օգնություն է ցուցաբերել Դիմողին, հարկ է համարում արձանագրել, որ

[1] Թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործով դատական նիստերի ձայնագրությունների համաձայն՝ դատական նիստը թվագրված է 09.10.2024 թվականով

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածի հաշվառմամբ, փաստաբանի վարքագծի կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից, **բարեխղճորեն և ժամանակին** պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Ավելին, տրված հանձնարարության շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Համադրելով սույն գործով հաստատված փաստերը և վկայակոչված իրավակարգավորումները, Հանձնաժողովը նախ հարկ է համարում նշել, որ Փաստաբանի և Գոհարիկ Թաֆրալյանի միջև կնքված 1-ին և 2-րդ Պայմանագրերի շրջանակներում Փաստաբանը ստանձնել է Գոհարիկ Օնիկի Թաֆրալյանի, Մանիկ Աշոտի Մինասյանի, Լիզա Աշոտի Թաֆրալյանի շահերի պաշտպանությունը, սակայն սույն կարգապահական վարույթի համար հիմք հանդիսացած հաղորդումը (առիթը)

ներկայացվել և ստորագրվել է բացառապես Դիմող՝ Մանիկ Մինասյանի կողմից, ինչի արդյունքում ստացվել է, որ Փաստաբանի կողմից հնարավոր խախտումներ թույլ տալու վարքագիծը վերջինիս փաստացի վերագրել է միայն Դիմողը:

Իր հերթին, քննարկելով Փաստաբանի կողմից Դիմողի շահերի պաշտպանության ապահովմանն ուղղված գործողությունները վերը նշված Օրենքի և Կանոնագրքի կանոններին համապատասխանության տեսանկյունից, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ 1-ին Պայմանագրից բխող հանձնարարություն կատարվել է ամբողջ ծավալով և իրեն սպառել է, երբ Փաստաբանը թիվ ՇԴ3/0580/02/22 գործով վճռի դեմ 29.05.2023 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որի արդյունքներով ՀՀ վերաքննիչ դատարանը բեկանել է վճիռը և գործն ուղարկվել նույն դատարան նոր քննության:

Ըստ այդմ, Հանձնաժողովը փաստում է, որ, չնայած Դիմողը և նրա ներկայացուցիչ Գոհարիկ Թաֆրալյանը ներկայացրել են հակասական և անորոշ տեղեկություններ, այնուամենայնիվ, վերջիններիս դժգոհությունն ուղղակիորեն վերաբերում է թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործով նոր քննության ընթացքում Փաստաբանի կողմից գործի վարմանը և դրա ընթացքին՝ մասնավորապես, տվյալ գործով նշանակված նիստերին Փաստաբանի մասնակցությանը, իսկ մասնակցելու պարագայում դրանց հետաձգմանը:

Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ փաստաբանի կողմից իրեն տրված հանձնարարության կատարման ընթացքում օբյեկտիվորեն կարող են առաջանալ դրա կատարման հետ չկապված տարատեսակ իրավիճակներ, որոնք ուղղակիորեն կարող են ազդեցություն ունենալ հանձնարարության կատարման վրա, որպիսի պայմաններում փաստաբանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ իր վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու և ներկայացնելու համար, հնարավորինս զերծ պահելով դրանց նկատմամբ որոշակի բացասական ազդեցությունից: Ըստ այդմ, անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել այն բոլոր հանգամանքները, որոնք ի հայտ են եկել այդ իրավիճակներում, քանի որ կարող են ի հայտ գալ այնպիսի իրավիճակներ, որոնք կանխատեսելի չեն կամ դրանց վրա հասնելը կախված չէ անձի կամարտահայտնությունից:

Այս առումով, գործում առկա ապացույցները վկայում են այն մասին, որ թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործի բեկանումից և այն նոր քննության ուղարկելուց հետո Փաստաբանը 2-րդ Պայմանագրի շրջանակներում կրկին ստանձնել է, ի թիվս այլոց, նաև Դիմողի շահերի պաշտպանությունը: Այդ պահից՝ 02.05.2024 թվականից, ընդհուպ մինչև սույն գործով Դիմողի հաղորդման ներկայացման օրը՝ 25.11.2024 թվականն ընկած ժամանակահատվածում թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործով նշանակված են եղել ընդամենը 4 դատական նիստ:

Այդ դատական նիստերից Փաստաբանը չի ներկայացել ***18.04.2024 թվականին նշանակվածին, այն պատճառաբանությամբ, որ կորցրել է իր դրամապանակը և դրանում առկա փաստաթղթերով, ինչի մասին նախապես, մինչև նիստը, տեղեկացրել է Դիմողին և այլ վստահորդներին, ում կողմից նաև չի ներկայացվել որևէ առարկություն այդ կապակցությամբ և նրանք ներկայացել են դատական նիստի առանց Փաստաբանի:***

Ավելին, այդ նիստի արդյունքներով Գոհարիկ Օնիկի Թաֆրալյանը, Դիմող՝ Մանիկ Աշոտի Մինասյանը, Լիզա Աշոտի Թաֆրալյանը ներգրավվեցին թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործով որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք, ինչը փաստացի բխել էր Փաստաբանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի արդյունքներով կայացված դատական ակտից, որպիսի պայմաններում Փաստաբանի բացակայությունը որևէ ազդեցություն չի ունեցել:

Միաժամանակ, Փաստաբանը չի ներկայացել նաև ***10.10.2024 թվականին նշանակված դատական նիստին, այն պատճառաբանությամբ, որ իր փղայի կինը պետք է վիրահատվի, ինչի մասին նախապես տեղեկացրել էր*** Դիմողին և նրա ներկայացուցիչ Գոհարիկ Թաֆրալյանին: Նշված դատական նիստը հետաձգվել է՝ գործի վարույթը կասեցնելու համար միջնորդությունը ներկայացնելու և քննարկելու համար:

Վերոգրյալի պայմաններում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Փաստաբանը ունեցել է այնպիսի պատճառներ, որոնց պայմաններում նա ողջամտորեն կարող էր չունենալ հնարավորություն մասնակցել 18.04.2024 և 10.10.2024 թվականին նշանակված դատական նիստերին, Դիմողը տեղեկացված է եղել ինչպես ներկայանալու անհնարինության, այնպես էլ պատճառի մասին, մասնակցել է նիստերին Փաստաբանի բացակայությամբ, իսկ դրա արդյունքներով որևիցե կերպ խոչընդոտ չի հարուցվել Դիմողի շահերի պաշտպանությանը:

Բացի այդ, 15.08.2024 թվականին նշանակված դատական նիստին Փաստաբանը ապահովել է իր մասնակցությունը և խնդրելով այն հետաձգվել պատճառաբանելով, որ Գոհարիկ Օնիկի Թաֆրալյանի, Դիմող՝ Մանիկ Աշոտի Մինասյանի, Լիզա Աշոտի Թաֆրալյանի շահերի պաշտպանության ապահովման նպատակով պահանջել է որոշակի տեղեկություններ՝ այդ թվում հետագայում դատարան հայց ներկայացնելու համար, ինչի կապակցությամբ առարկություն չի հնչեցրել Դիմողը կամ այլ վստահորդները:

Ավելին, Գոհարիկ Օնիկի Թաֆրալյանի, Դիմող՝ Մանիկ Աշոտի Մինասյանի, Լիզա Աշոտի Թաֆրալյանի անունից Փաստաբանը հետագայում կազմել է հայցադիմում ընդդեմ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի, Գոհար Շիրակի Մինասյանի և Կարինե Շիրակի Մինասյանի՝ *ՀՀ Շիրակի մազի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի թիվ 77 շենքի թիվ 9 հասցեի բնակարանի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին*, որը թիվ ՇԴ/0797/02/24 քաղաքացիական գործով մուտքագրվում է 06.09.2024 թվականին և Դատարանի 17.09.2024 թվականի որոշմամբ ընդունել է վարույթ, ինչից հետո, այդ փաստի հաշվառմամբ, թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործով Դատարանի 12.02.2025 թվականի որոշմամբ այդ գործի վարույթը կասեցվել է մինչև թիվ ՇԴ/0797/02/24 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը եզրահանգում է, որ սույն գործի շրջանակներում չի ապացուցվել Փաստաբանի կողմից բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու հանգամանքը, իսկ առկա ապացույցների հաշվառմամբ հերքվել է նրան վերագրվող վարքագիծը:

2. Հաջորդիվ, Հանձնաժողովը, պատասխանելով հարցերին առ այն, արդյոք Փաստաբանը քննարկվող իրավիճակում իրավասու է եղել հրաժարվելու իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից և արդյոք Փաստաբանը թողել է

գործը այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը հայտնվել է անելանելի դրության մեջ և ժամանակին չի ստացել իրավական օգնություն, հարկ է համարում արձանագրել, որ

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 3.8.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը, եթե օրենքը չի արգելում և այլ բան նախատեսված չէ պայմանագրով, իրավունք ունի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հետևյալ հիմքերով՝*

1) վստահորդը փաստաբանի պարզաբանումներին հակառակ կատարում է գործողություններ կապված հանձնարարության հետ, որոնք օրենքով արգելված են, կամ վստահորդի հանձնարարությունները կարող են հանգեցնել փաստաբանի կողմից ՀՀ օրենսդրության կամ Կանոնագրքի խախտմանը.

2) վստահորդը պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնար՝ նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,

3) վստահորդը թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,

4) հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողություններ կատարելու հետևանքով,

5) վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը անվանարկող գործողություններ,

6) վստահորդը հրաժարվում է կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:

Կանոնագրքի 3.8.3-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու դեպքում փաստաբանը պարտավոր է բացատրել վստահորդին իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից հրաժարվելու պատճառները և զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել վստահորդի շահերին: Փաստաբանն իրավունք չունի թողնել գործը այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը կարող է հայտնվել անելանելի դրության մեջ և ժամանակին չստանալ այլ իրավական օգնություն(...):*

Նշված կարգավորումներին ուղղակիորեն բխում է այն հանգամանքը, որ փաստաբանն իրավասու չէ ցանկացած իրավիճակում և առանց որևէ պատճառաբանության հրաժարվելու իր կողմից վստահորդի առջև ստանձնած պարտավորությունների կատարումից, որպիսի իրավիճակում կարող են վտանգվել վստահորդի շահերը, իսկ վստահորդը ժամանակին այլ իրավական օգնություն չստանալու պարագայում կարող է հայտնվել խոցելի և անելանելի դրության մեջ:

Համադրելով սույն գործով հաստատված փաստերը և վկայակոչված իրավակարգավորումները, Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ քննարկման առարկա իրավիճակը փաստացի վերաբերում է 2-րդ Պայմանագրի կատարումից հրաժարվելու, դրանից բխող հանձնարարության կատարումը ավարտին չհասցնելու և գործը անելանելի վիճակում թողնելուն:

Այս կապակցությամբ Հանձնաժողովը արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում չի ներկայացվել ապացույց առ այն, որ 2-րդ Պայմանագիրը լուծել է Փաստաբանի նախաձեռնությամբ կամ նա հրաժարվել է դրա հետագա կատարումից: Այլ կերպ ասած, Կանոնագրքի 3.8.2 ենթակետի կարգավորման հաշվառմամբ, անհրաժեշտ է որպեսզի պայմանագրի լուծումը կամ հանձնարարության կատարումից հրաժարումն իրականացվի հենց Փաստաբանի նախաձեռնությամբ, մինչդեռ սույն գործով հաստատվել այն փաստը, որ Փաստաբանի ծառայությունից և գործի ընթացքից դժգոհ լինելու պայմաններում Գոհարիկ Թաֆրալյանը, ով միաժամանակ հանդիսանում է և վստահորդ, և պատվիրատու, 2024 թվականի հոկտեմբեր ամսին Փաստաբանից ստացել է առաջարկ 2-րդ Պայմանագիրը լուծել փոխադարձ համաձայնությամբ, պատճառների ներկայացմամբ, և վերադարձնել գումարի մի մասը, ինչի կապակցությամբ Գոհարիկ Թաֆրալյանը որևէ դիրքորոշում չի հայտնել, սակայն դրան զուգահեռ դիմել է այլ փաստաբանի օգնությանը՝ փաստացի հրաժարվելով Փաստաբանի ծառայություններից:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը հարկ է համարում վկայակոչել **Կանոնագրքի 3.4.2 ենթակետը, որի համաձայն՝** ***այն դեպքում, երբ վստահորդը կոնկրետ փաստաբանի*** *հետ իրավական օգնություն ցույց տալու* ***պայմանագիր կնքելուց հետո առանց նրա հետ համաձայնեցնելու մեկ այլ փաստաբանի հետ կնքում է նույն հանձնարարության*** *հետ* ***կապված պայմանագիր****, ապա* ***փաստաբաններից յուրաքանչյուրը, ով տեղեկացված չի եղել այլ փաստաբան ներգրավելու մասին, իրավունք ունի հրաժարվել իր հետ կնքված պայմանագրից****, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով արգելվում է փաստաբանին իրավական օգնություն ցույց տալուց հրաժարվելը:*

Այսինքն, ստացվում է, որ առկա իրավիճակում, Փաստաբանը կարող էր հրաժարվել 2-րդ Պայմանագրի կատարումից, քանի որ փոխադարձ համաձայնությամբ այն լուծելու Փաստաբանի առաջարկը ներկայացվելու պահի դրությամբ, ինչպես նշել է Դիմողը և նրա ներկայացուցիչ՝ Գոհարիկ Թաֆրալյանը, վերջիններս արդեն դիմած են եղել այլ փաստաբանի նույն հարցի կարգավորման կապակցությամբ:

Առկա իրավիճակում, այդ թվում նաև Փաստաբանի կողմից բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալուն վերաբերող փաստերի հաշվառմամբ, Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ 2-րդ Պայմանագիրը լուծելիս Դիմողի և այլոց շահերի պաշտպանության համար Գոհարիկ Թաֆրալյանի կողմից արդեն ներգրավվել էր այլ փաստաբան, ինչը ինքնին բացառում է այն հանգամանքը, որը Դիմողը կամ այլ վստահորդները կարող էին հայտնվել անելանելի դրության մեջ և ժամանակին չստանալ այլ իրավական օգնություն:

Բացի այդ, Հանձնաժողովը ընդգծում է, որ 2-րդ Պայմանագիրը լուծվելուց հետո՝ 2024 թվականի հոկտեմբեր, թիվ ՇԴ3/0580/02/22 քաղաքացիական գործով մոտակա նիստը նշանակված է եղել 28.11.2024 թվականին, իսկ թիվ ՇԴ/0797/02/24 քաղաքացիական գործով այդ պահին նիստ նշանակված չէր (մոտակա նիստը նշանակվել է 29.01.2025 թվականին), ինչն իր հերթին ևս վկայում է այն մասին, որ Դիմողը կամ այլ վստահորդները չեն հայտնվել անելանելի դրության մեջ և չեն զրկվել ժամանակին այլ իրավական օգնություն ստանալու հնարավորությունից:

Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը եզրահանգում է, որ սույն գործի շրջանակներում չի ապացուցվել Փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի հետագա կատարումից անհիմն հրաժարվելու, ինչպես նաև գործը

այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը հայտնվել է անելանելի դրության մեջ և ժամանակին չի ստացել իրավական օգնություն թողնելու հանգամանքը, իսկ առկա ապացույցների հաշվառմամբ հերքվել է նրան վերագրվող վարքագիծը:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և դրանց կից ներկայացված փաստաթղթերն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում է փաստաբան Անահիտ Ալբերտի Ալոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Անահիտ Ալբերտի Ալոյանի (արտոնագիր՝ թիվ 207) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.8.2 և 3.8.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-24181 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24181-2-Ա
26 մարտի 2025թ.
ք.Երևան